ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 388-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 396-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 415-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 423-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԱՍԱՄԲ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՄԱՍՈՎ, ԿԱՐՃԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 388-րդ հոդվածի 1-ին մասի, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 415-րդ հոդվածի 1-ին մասի և 423-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճելու վերաբերյալ առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-ի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հոկտեմբերի 30-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «(...) որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 388-րդ հոդվածի 1-ին մասի, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 415-րդ հոդվածի 1-ին մասի և 423-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ հոդվածին, 78-րդ հոդվածին, 79-րդ հոդվածին և 81-րդ հոդվածին»:

2. Վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով դրանում որպես եզրափակիչ դատական ակտ չի նախատեսվել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշումը՝ իրավունքի բացի լույսի ներքո, ինչպես նաև հակասում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին այնքանով, որքանով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշումը, համարվելով միջանկյալ դատական ակտ, ոչ իրավաչափորեն սահմանափակում է անձի՝ դատարան դիմելու մատչելիության իրավունքը:

Դիմողի կարծիքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 4-րդ մասի և 373-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն իրենց դատավարական հետևանքներով համընկնում են հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշմանը, այլ կերպ ասած, վերջիններս գործի հետագա քննությունն արգելափակող դատական ակտեր են, հետևապես օրենսդիրը միևնույն դատավարական հետևանք առաջացնող դատական ակտերին տվել է տարբեր կարգավիճակներ և դրանցով պայմանավորված՝ մի դեպքում սահմանափակել է անձի՝ վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքը, մյուս դեպքում՝ ոչ:

3. Պատասխանողը, ի թիվս այլնի, նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է գործն ըստ էության լուծող դատական ակտերի ցանկը, սահմանված է նաև, որ մնացած բոլոր դատական որոշումները, որոնք նշված ցանկի մեջ առկա չեն, հանդիսանում են միջանկյալ դատական ակտեր: Վիճարկվող դրույթները բավարարում են իրավական օրենքին ներկայացվող պահանջներին՝ հաշվի առնելով, որ դրանք բավարար չափով կանխատեսելի են, համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին:

Այսպիսով, պատասխանողը գտնում է, որ սահմանադրականության խնդիր առկա չէ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ:

Բացի այդ, պատասխանողի կարծիքով՝ սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ դիմումով ներկայացված հիմնավորումները, ելնելով նաև սույն գործում առկա նյութերի ուսումնասիրությունից, հանգեցնելու են Սահմանադրական դատարանի կողմից առավելապես ոչ սահմանադրական նորմերի բովանդակության մեկնաբանությանը՝ անկախ սահմանադրականության գնահատման հարցադրման հանգամանքից:

4. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, **ակնհայտ անհիմն է,** և սույն գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են. ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Միաժամանակ, նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ 1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»: Այնուհետև, նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է. «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում»: Իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն **ակնհայտ անհիմն է**, (...)»:

Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս «... դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր՝ (...):

(...)

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

5. Քննարկվող դեպքում դիմողը պնդում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում առկա է իրավունքի բաց այնքանով, որքանով որպես եզրափակիչ դատական ակտ չի նախատեսվել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի համաձայն՝

«2. Եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝

ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը,

բ. գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու,

կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները.

2) վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները.

3) Վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշումները»:

Նախ՝ Սահմանադրական դատարանն անհիմն է համարում իրավունքի բացի վերաբերյալ դիմողի փաստարկը, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, թե քաղաքացիական գործով կայացվող ո՛ր դատական ակտերն են համարվում եզրափակիչ, իսկ որոնք՝ միջանկյալ՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը համարելով միջանկյալ դատական ակտ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ անհիմն է միևնույն դատավարական հետևանքներ առաջացնող դատական ակտերին (հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշմանը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումներին) օրենսդրի կողմից «տարբեր կարգավիճակներ» տալու վերաբերյալ դիմողի պնդումը, քանի որ այդ որոշումները հետևանքների առաջացման տեսանկյունից չի կարելի նույնացնել:

Ողջ վերոգրյալի լույսի ներքո դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս ոչ միայն չի ներկայացրել բավարար հիմնավորումներ վիճարկվող նորմի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս) կամ դրա վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանության հակասահմանադրականության, այլ նաև իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, ակնհայտ անհիմն է, իսկ գործի վարույթն այդ մասով ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 388-րդ հոդվածի 1-ին մասի, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 415-րդ հոդվածի 1-ին մասի և 423-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

27 հունվարի 2021 թվականի
ՍԴԱՈ-17